

Կանխագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԹԻՐ 47




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԹԻՐ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԻՍ هانراكيداق HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 47 || 22 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

ԲԱՅԱԿԱՅԻՆ

Նո՛յն արշալոյսն է որ, ահա՛, մեղմօրէն
Երկրի վրայ լոյս ու ժպիտ կը ցանէ,
Ու ֆաղր այգերգն՝ ծիծուան լեզուով կը ձայնէ.
— Նոյն հուրին է եկած լոյսի աշխարհէն :

Նոյն առօրն է որ կը բացուի ժպտագին,
Զիշդ սարսուռ մը կը կաթկթի ամպերէն,
Թուփ ու ծաղիկ՝ գեփիւոյն հետ կը պարեն,
Ու հմա՛յք մ'ունի անուշ կապոյտն երկնփին :

Նո՛յն վայրերն են, սիրած վայրերս գեղեցիկ,
Հո՛ս պուրակներ, հոն՝ բաւոտներ եւ հեռուն՝
Անըջային ուրուանկարն լեռներուն.
Կամ դաշտեր, կամ մարմանդները ցոլացիկ :

Նո՛յն պատուհա՛նն, ուրկէ, հերու ֆով ֆովի,
Այս փոքրումներն կը դիտէիք երազու՛ն :
— Բայց այժմ, ինչո՞ւ, ո՛ր մտերիմդ սիրասուն,
Կեանքն առանց ֆեզ՝ շա՛տ ամայի կը թռչի :

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ



Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՆԱԽԱՏՈՆԱԿԸ

Երկինք ու գետին մոխրագոյն , սոսկալի ցուրտ կ'ընէ ի Վի-
եննա Սուրբ Նիկողայոսի նախատօնակին օրը : Զիւնը տեղալէ
դադրած է և աղմկայոյզ շարժում կայ փողոցներուն մէջ . փոխա-
նակ կառքերու՝ բալխիրները կը շրջին , ձիերուն վիզէն կախուած
բոժոժները հնչեցնելով զուարթ :

Շղաղ Բառք պարտէզին մէջ , ծառերուն ճերմկած ճիւղերուն
ներքեւ , սառած աւազանին վրայ , ամբոխը ձեռք ձեռքի տուած ,
ցուրտին անտարբեր , իրարու ետեւէ արագութեամբ կը սահի ,
զարնելով ու զարնուելով մինաւորիկ սահողներուն , ժպտուն և
խնդումներս : Աւազանը . որուն ջրերուն մէջ ամառը կարապ-
ներն իրենց փետուրները կը թանան , հիմա շնորհալի տիկիներե-
րու զբօսավայրը կ'ըլլայ : Բթերնին վեր , երեսնին կարմրած ,
օրիորդները՝ մէկ ոտքերնին գետնէն կտրած ու քիչ մը վեր բարձ-
րացուցած՝ պահ մը կը դադրեցնեն վազելնին և մօտէն անցնող
վայելուչ զինուորականին սիրուն ժպիտ մը նետելէ ետքը օրօր-
ուելով ու տատանելով աւելի արագ թռիչքով կը հեռանան :

Պղտիկ թռչուններ գետինն իջած առանց քաշուելու կը կտցեն

հացի փրկանքները, զորս մանր տղաք իրենց ձեռքի գոյնպագոյն գալարաթղթերուն մէջէն կը նետեն իրենց :

* * *

Կռապն վաճառանոցը հասած էի. խանութներուն առջեւը կեցած, ապակիներէն ներս Սուրբ Նիկողայոսի և անոր ընկերոջը Սատանային պաճուճապատանքները կը դիտէի: Ամէն մեծութեամբ կային: Սուրբը միշտ սպիտակ երկայն մօրուք ունէր, ոտաւարտը գլուխը, ձիւնով ծածկուած ոսկեզօծ պատմունճանք մինչև ոտքը. և Սատանան վերէն վար կարմիր հագուած, մագերը վեր տնկուած, լափելու փափաքով մը լեզուն դուրս կախած, Սուրբին քովը կայնած էր՝ մէկ ձեռքն եւ մէկ ոտքը շղթայակապ. կռնակին վրայ կ'երեւար խոշոր պարկ մը որուն մէջ պզտիկ տղայ մը կար մէկ ոտքը պարկին բերանէն դուրս ինկած:

խանութներուն առջեւ տղաքներ շարուած ժամերով կը դիտէին:

Այդ օրը Վիեննայի հանդիսաւոր տօներէն մէկն է, և հրաւիրուած էինք այն գիշերը մեր դրացիներէն մէկուն տունը, ներկայ գտնուելու այն այցելութեան զոր Սուրբ Նիկողայոս պիտի ընէր տանը երկու պզտիկ մանչերուն: Օր առաջ հայրերնին Քարլի և Ֆրանզի իմացուցած էր անոր գալուստը՝ հեռագիր մը ցուցնելով իր զաւակներուն. միայն թէ ամբողջ տարին խելօք կեցողին ընծայ պիտի բերէր սուրբը, իսկ անառակները Սատանան իր պարկին մէջ պիտի նետէր. այսու հանդերձ յոյս մըն ալ կը ձգէր անոնց սրտին մէջ, որ թերեւս բարի ծերունին ներողամիտ ըլլայ:

Պզտիկները իրենց տօն աւուր կապոյտ թաւիչէ հագուստները հագած սրահին մէջ կը սպասէին: Իրենց մազերը, ճակատուն վրայ ծոպածեւ կտրուած, մինչեւ յօնքերը կ'իջնէին, իսկ ետեւէն խարտեաչ խոպոպիկները ժանեկաւոր լայն օձիքներուն վրայ կը ծածանէին. հրեշտակային տեսք մը տալով անոնց քնքուշ և թարմ դէմքերուն: Սպիտակ և գիրուկ սրունքնին բաց, խոշոր խոշոր աչքերով սրահէն ներս մտնողներուն կը նայէին, արդեօք Սուրբ Նիկողոսն էր եկողը թէ ոչ. ու փոքրիկ սրտերնին անհամբերութեամբ լի, մեծ շունչ մը կ'առնէին: Անշուշտ Սուրբին չպիտի սպասէին եթէ բերելիք ընծաներուն յոյսը չըլլար. և անոնց մտածելով՝ յանձն կ'առնէին ահուդողի մէջ արթուն կենալ. իրենց ժամերը կ'անցնէին ու ան չէր երեւար, և սկսած էին աչքերնին չփել քունը հալածելու համար, և յուսախաբութիւնը իրենց դէմքը կը ժանգոտէր: Մօրերնուն քովը կայնած, խոհուն ու լալ-

կան կերպարանք մը առած էին: Վերջապէս պզտիկը, որ հագիւ եօթը տարեկան կար, երկչոտ ձայնով մը.

— Սուրբը ե՞րբ պիտի գայ, մրմնջեց, արդեօք մեզ մոռցա՞ւ:

— Հիմա՛, հիմա՛, ըսաւ մայրը:

Եւ այդ պահուն դուռը զարնուեցաւ: Երկու պզտիկները ապշած և բերաննին բաց կեցած էին:

Եկողը հրաւիրեալ մըն էր և պզտիկները.

— Տէ՛ր Աստուած, Սուրբը ո՞ւր մնաց, կը մրմնջէին սրտնեղութեամբ:

Մէյ մըն ալ, առանց դուռը զարնուելու, Սուրբ Նիկողայոս ներս մտաւ:

Ալեւոր մըն էր վսեմ և բարձրահասակ, փայլուն մետաքսէ պատմուճանը ձիւնով ծածկուած, ականազարդ սաղաւարտը գրլխուն վրայ և երկայն մօրուքը մինչեւ կուրծքին՝ կէսը տարածուած: Բայց ծերին երեսը այնչափ թարմ ու կարմիր էր որ տղաքը զարմացմամբ անոր կը նայէին: Պահ մը սակայն աչքերնին վեր առնելով Սատանան տեսան որ Սուրբին ետեւ կայնած, ձեռքն ու ոտքը շղթայակապ, հրավառ աչքերը իրենց վրայ կը տնկէր. Քարլ ու Ֆրանձ ձեռնամած ծունգի վրայ եկան, երեսունը գոյնը նետած, դողդոջուն շրթներով. անոր հասակը կը չափէին, ոտքերն ալ ո՛րչափ սուր էին, ու սարսուռ մը իրենց մատղաշ մարմինը կը դողացնէր: Բայց փառք Աստուծոյ, այդ չար սատանային ձեռքն ու ոտքը շղթայակապ էին, ու նոր յոյսով գլուխնին վեր առին:

Հիմա Սուրբ Նիկողայոսի աչքերը կը դիտէին: Ինչո՞ւ համար երկու ականոց իրարու վրայ դրած էր. խկոյն միտքերնին ինկաւ որ Սուրբը դարեւ է ի վեր ապրած ըլլալուն՝ աչքերը տկարացած ըլլալու էին: Պզտիկը Սատանային կռնակը տոպրակը տեսնելով՝ մեծ եղբօրը աւելի մօտեցաւ. եթէ ընծաները ստանալու փափաքը չըլլար, ի՞նչպէս շուտով մօրկանը գրկին մէջ գլուխը պիտի պահէր:

Սուրբ Նիկողայոս ամուր ձայնով սկսաւ խօսիլ. բոլոր հանդիսականք ծունր դրած էին սրահին մէջ. եւ վարագոյրի մը ետեւ պահուրտած կարող չէի ծիծաղս պահել:

— Հսէ՛ք, հրամայեց Սուրբ Նիկողայոս, որերնի՞դ էք Ֆրանձը եւ որերնի՞դ Քարլը:

— Ես եմ Քարլը, պատասխանեց մեծը, եւ ահա եղբայրս Ֆրանձ:

— Հիմա ըսէք թէ այս տարի ի՞նչ սորվեցաք:

— Շատ քիչ բան, հայր սուրբ, բայց կը խոստանամ գալ տարի աւելի աշխատիլ:

— Ինչո՞ւ համար այս տարի յառաջդիմութիւն չըրիք :

— Յանցանքը իմս չէ , այլ Ֆրանսիանը որ միշտ զիս կը շփոթեցնէ :

Պզտիկը գլուխը կուրծքին փակցուց :

— Իսկ դու , Ֆրանս , աշխատեցա՞ր :

— Բայց ես դեռ շատ ժամանակ ունիմ , հայր սուրբ , ըսաւ Ֆրանս զարմացած , տակաւին շատ փոքր եմ :

— Ժամանակ ունիմ ի՞նչ ըսել է . ինչո՞ւ ծնողքիդ խօսքին չես հնազանդիր :

— Ուրիշ անգամ չեմ ըներ , մըմնջեց պզտիկը . ու մատները իրարու մէջ անցուցած՝ անոնց հետ կը խաղար :

Կարծեմ Սուրբ Նիկողայոս ալ ինծի պէս ծիծաղը զսպելու անկարող՝ աւելի երկարելու վախցաւ , վասն զի պզտիկները այնպիսի կերպարանք մը առած էին որ զանոնք գրկելով համբուրելու փափաք կուտար :

— Շատ լաւ , ըսաւ ծեր Սուրբը , քանի՞ լեզու կը խօսիք :

Այս անգամ Ֆրանսն էր պատասխանող :

— Գերմաներէն , ֆրանսերէն ու անգլիերէն :

— Երգել գիտե՞ք :

— Այո , ըսին երկուքը մէկանց ծիծաղելով :

— Ուրեմն երգեցէք տեսնեմ :

Երկու պզտիկները տկար ձայնով սկսան մանկական երգ մը երգել :

— Աղէկ , շատ լաւ , մըմնաց ծերը . Սա Սատանան տեսա՞ք , մինչեւ վերջը ձեր վրայ գէշ կը խօսէր ու կը ցանկար ձեզի պարկին մէջ նետել , բայց ես ուզեցի անձամբ գալ տեսնել թէ ըսածները շիտա՞կ էին : Թէեւ շատ գոհ չեմ , բայց վերջապէս այս անգամ կրնամ ներել ...

Դեռ խօսքը չվերջացուցած , սրահին դուրսի նրբանցքը որ մութ ձգուած էր լուսաւորուեցաւ եւ ձեղունէն ամէն տեսակ շաքարեղէններ սկսան շառաչմամբ վար թափիլ :

Տղաքը , Սուրբ Նիկողայոսն ալ , Սատանան ալ մոռցած , շաքարեղէններուն մէջ ծունգի եկած կը տապալտկէին գրեթէ : Քարլ ատոնց մէջ զարմանքով գտած էր կահաչինութեան գործիքներու տուփ մը , զոր շատոնց կը փափաքէր ունենալ , եւ Ֆրանս ներկատուփ մը որուն խենդի պէս կ'ըղձար :

Իսկ Սուրբ Նիկողայոս շփոթութեան պահուն սրահէն դուրս անհետացած էր Սատանային հետ միասին :

Ա՛լ չէի խնդար : Մեր մանկութեան օրերը միտքս կ'իյնային : Չար ու գող ալապիւնիկ մը կար որուն անունէն կը սահմըռկէինք , անձեւ ու տարաւմ էակ մը որուն երեսը չէինք տես-

սած եւ որուն ներկայութիւնը սակայն կը զգայինք մեր մօտ, մեր գլխուն վերեւ, պատուհանին ետին, էակ մը անգութ ու աններող, Անոր տեղ, այս երջանիկ պղտիկներն ունէին իրաւ խոժոռ ծերունի մը, բայց ա՛յնքան բարի, ա՛յնքան առատաձեռն, որ մէկ կողմէ կը սաստէր ու միւս կողմէ կը շոյէր, որ միտքին վրայ կ'ազդէր, այլ մանկական սիրար կը լեցնէր բարութեան ու ներողամտութեան շինիչ զգացումովը:

Ո՞Վ ՀՆԱՐԵՑ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

ՆՈՒԷՐ՝ ԲՐՈՋՍ՝ ՀՈՒՓՍԻՄԷՆ


(Շարունակութիւն 46րդ էիւէն)

Այս տղան 7 տարեկան հասակէն արդէն կը վարձուեր իբրեւ հոտաղ կովեր արածեցնելու և միեւնոյն ժամանակ կը հսկէր ճանապարհին վրայ, երեկոյները կը գոցէր քաղաքի դռները, և այս աշխատութեան փոխարէն օրական կը ստանար 30 փարա, 12 տարեկան հասակին շորճ սկսաւ աշխատել դաշտի մէջ, կը հրահէր ձիերու վրայ, իսկ յետոյ զայն ընդունեցին հանքին մէջ, ուր կ'աշխատէին իր հայրն ու մեծ եղբայրը: Շորճ այստեղ տեսակներու կը բաժնէր ածուխը, մէկ տեղէն միւսը կը լեցնէր ու կը տանէր ուր որ կը հրամայէին:

Տղան այնպէս աշխատասէր ու սրամիտ էր, որ երբ 14 տարեկան եղաւ աստիճանը բարձրացուցին: Հայրը ծեր Սթեֆէնսոնը, հանքին մէջ հասարակ պաշտօն մ'ունէր, նա կը վառէր վառարանը, կը հսկէր որ միշտ եղածին չափ կրակ գտնուի անոր մէջ. իսկ այս վառարանը ջուր կը տաքցնէր մեքենայի մը համար, որ հանքին մէջի ջուրը կը քաշէր: Շորճ հօրը օգնականը ըրին: Այստեղ տղին աշխատութիւնը շատ աւելի դիւրին էր, իսկ ամսականը աւելի շատ, բայց շորճ ամէնէն շատ ուրախ էր անոր համար, որ հիմայ կրնար ուղածին պէս զննել մեքենան: Նա այնպէս ուշադրութեամբ կը քննէր մեքենային կազմութիւնը, որ չուտով իմացաւ ոչ միայն թէ ինչպէս կը գործէ ամբողջ մեքենան, այլ և, թէ ինչի կը ծառայէն անոր ամէն մէկ պտուտակը: Շորճ, ոչ միայն լաւ բաները մըն էր, այլև ուրախ, բարի ու փոքր ծառայութիւններ մատուցանելու միշտ պատրաստ տղայ մը

այնպէս որ չուտով սիրեցին զինքը թէ՛ ընկերները եւ թէ՛ իրեն մեծերը: 19 Տարեկան Հասակին անոր յանձնեցին արդէն ոչ միայն վառարանը վառելը, այլ եւ մեքենային հսկողութիւնը և զայն կառավարել: ասանկով ան հօրմէն աւելի բարձր ու շատ տեղ գրաւեց:

Մեքենան, որու վրայ կը հսկէր ձորճ, ջուրը կը քաշէր, ինչ-



ձորճ Սեֆէնսոն

պէս վերը ըսինք եւ ամենափոքր անզգուշութիւնը կամ մեքենայի վնասուիլը կարող էր մեծ փորձանք բերել: Ջուրը կարող էր լեցնել հանքը և հարիւրաւոր աշխատւորներու կեանքը խլել: Բայց ձորճին վրայ կարելի էր վստահիլ՝ չնայելով անոր երիտասարդ հասակին: Քանի որ բանուորները կ'աշխատէին հանքին մէջ, նա մեքենայէն չէր հեռանար, իսկ հանգստեան ժամուն կը

մաքբէր ու կը զննէր գայն: Շարաթ օրերը աշխատաւորները կը ստանային վարձքերը և անոնցմէ մեծ մասը կ'երթային գինե-տուններն ու սրճարանները, ուր կը խմէին, աղմուկ կը հանէին թուղթ կը խաղային, բայց շորճ ժամանակը պարապ անցնել չէր սիրեր:

Աշխատաւորներուն մէջ կային, որ գրել կարդալ գիտէին և երբ անոնք բարձրաձայն կը կարդային ո' եւ է գիրք կամ լրագիր, շորճը ագահաբար մտիկ կ'ընէր անոնց, իմանալու համար թէ ինչ կ'անցնի կը դառնայ աշխարհիս վրայ, ինչպէս կ'ապրին ու կ'աշխատին ուրիշ մարդիկ, ուրիշ ինչ երկիրներ ու քաղաքներ կան: Նա կ'ուզէր նաև իմանալ թէ ինչպէս կը շինուին այլ և այլ մեքենաներ, բայց դժբախտաբար ինք կարդալ չգիտեր ու շատ կը ցաւէր ասոր վրայ:

— Ինչ պիտի ընես կարդալը—կ'ըսէին անոր ընկերները,— քեզ առանց ատոր ալ ամէնքը կը սիրեն ու կը յարգեն, իսկ մեծերդ կը հաւատան եւ գիտեն որ դու խելացի երիտասարդ մեք եւ կարող ես մեքենան ուղղել եթէ բան մը պատահի:

— Անոր համար կարդալ պէտք է, կ'ըսէր անոց շորճ, որ կարդալ չգիտցող մարդը խելացի ալ լինի, ամէն բանի ինքը իրեն խելքովը պիտի հասնի և կամ հարցերով պիտի ձանձրացնէ ուրիշները, մինչդեռ կարդալ գիտցողը կը կարդայ խելացի մարդոց գրած գիրքերը և կ'իմանայ ամէն ինչ որ իրեն պէտք է, առանց ժամանակը պարապը անցնելու:

Կան մարդիկ, որ միայն կը գանգատին, թէ իրենց տղայու-թեան ատեն կարդալ գրել չեն սովորեցուցեր, և իրենք չեն աշխատիր կորած ժամանակի տեղը հանել: Շորճ այս տեսակ մարդոցմէն չէր: Նա գիտեր որ հայրը ընտանիքին միայն ուտեստը կարող էր ճարել և չէր խորհիր ուսման մասին, ուստի մտածեց փոքր ժամանակուան չսովորածը մեծ ատենը սորվիլ: Բարեբախտաբար մօտակայ գիւղին մէջ պզտիկ դպրոց մը կար և շորճ, առանց երկար մտածելու, սկսաւ հոն յաճախել ազատ ժամերուն՝ սովորելու համար: Նա կը սովորէր փոքր տղայոց հետ և շարաթա-կան 30 փարա կը վճարէր: Շատ հաճելի չէր այս՝ 19 տարեկան երիտասարդին, բայց նա հաճոյքի մասին չէր մտածեր, այլ օգտակարը կը փնտռէր և կէս տարուան մէջ սորվեցաւ լաւ կարդալ և բաւական գրել: Սակայն ասով չի բաւականացաւ, մտաւ ուրիշ դպրոց մը, ուր սկսաւ սովորիլ թուաբանութիւն: Դիւրութեամբ չէր սովորէր շորճը, ամբողջ երեկոնները դասերով կը զբաղէր, վերջապէս սովորեցաւ այն ամէնը ինչ որ գիտէր իր ուսուցիչը: Հիմա շարաթական 2 դահեկան կը վճարէր ուսման վարձք և ասկէց զատ


իրեն համար գրքեր ալ կը գնէր։ Այս ամէն բանի համար իհարկէ, ստակ պէտք էր, որովհետեւ իրեն վաստակը մեծ բան մը չէր, պէտք եղած դրամը հայթայթելու համար ծօրճ սկսաւ աղատ ժամերուն ամէն բանի աշխատիլ, ինչ որ պատահէր կ'ընէր, աշխատաւորներուն ոտնամաններն ու զգեստները կը կարկտէր և քանի որ թէ մէկը և թէ միւսը գործաւորները չատ կը պատուէին, ծօրճի ստակը հետզհետէ կ'աւելնար ու կ'աւելնար։ Վերջապէս այնչափ ստակ հաւաքեց օր կարողացաւ գնել փոքր տնակ մը և ամուսնացաւ գեղեցիկ, համեստ աղջկան մը հետ։

Հիմա ալ լաւ կ'ապրեր ծօրճ Սթէֆէնսոն, կ'ինը բարի էր, տունը մաքուր ու ամէն բան կարգին կը պահէր, տան գործերով կը զբաղէր - իսկ ինքը կիրակի օրերը փոխանակ ընկերներու հետ գրօսանքի ելնելու, կը կարդար այլ և այլ գրքեր, որոնց մէջ գրուած էր ամէն տեսակ մեքենաներու կազմութեան մասին և այսպիսով հետզհետէ աւելի ու աւելի բան սորվեցաւ, բայց յանկարծ դժբախտութիւն մը պատահեցաւ անոր։ Անգամ մը, երբ Սթէֆէնսոն գացեր էր գործին, տանը մէջ հրդեհ պատահեցաւ, թէև կրակը չուտով մարեցին դրացիները, որոնք շատ կը սիրէին խեղացի ու աշխատող Սթէֆէնսոնը, բայց իրարանցումին շատ բան վնասուեցաւ, որոնց մէջ էր և պատի ժամացոյցը։

Դառն էր ծորճին տուն դառնալուն տեսնել իր սիրած ժամացոյցը գետին ինկած, աղտոտած ու ջարդուած։ Քիչ ժամանակուան մէջ չէր, որ հաւաքեր էր զայն գնելու համար պէտք եղած ստակը, իսկ հիմա պէտք էր նետել ժամացոյցը։ Դրացիները խորհուրդ կուտային Սթէֆէնսոնին ժամացոյցը ժամագործին տալ չինելու, բայց որովհետեւ այս բաւական սուղ կ'արժէր, Սթէֆէնսոնը ինքը գործի սկսաւ, նախ և առաջ քակեց ժամացոյցի բոլոր մասերը, յետոյ մաքրեց անոնք և այնպէս լաւ շինեց, որ անկից վերջ բոլոր դրացիները սկսան անոր բերել իրենց վնասուած ժամացոյցները՝ շտկելու, չուտով համբաւը տարածուեցաւ բոլոր շրջակաները։

Բայց Սթէֆէնսոն երկար ժամանակ լաւ ու բաղդաւոր չապրեցաւ, տարիէ մը ետք մանչ զաւակ մը ունեցաւ, իսկ երկու տարիէն կ'ինը մեռաւ, ասոր վրայ շատ կը ցաւէր, հայրն ալ ծեր Սթէֆէնսոն՝ կուրցաւ աշխատաւորի մը անհոգութեան պատճառաւ։ Այս աշխատաւորը մեքենայէն շոգին դուրս թողած էր երբ ծերուկը մեքենային մօտն էր, շոգին զարկած էր Սթէֆէնսոնի երեսին և վնասած աչքերը։ Տեսնելով այս դժբախտութիւնը, ծորճ առաջ իր քովն առաւ հայրն ու մայրը, իսկ յետոյ անոնց համար փոքրիկ տնակ մը գնեց և ապրուստի համար ամէն պէտք եղածը կը հայթայթէր, ամէն կերպով կ'աշխատէր մխիթարել զի-

բենք: Բայց « դժբախտութիւնը, » ինչպէս կ'ըսէ առակը, « մի նակը չի գար. » այսպէս ալ եղաւ: Սթէֆէնսոն դեռ մէկ փասէն հազիւ ազատած էր, վրայ հասան ուրիշներ: Քիչ ատենէն Անգլիոյ մէջ պատերազմ հրատարակուեցաւ և Սթէֆէնսոնին վիճակուեցաւ զինուոր լինել: Շատ դժուար էր հիմա խեղճին. չէր ուզեր թողուլ ծեր ծնողքը և փոքր զաւակը. կը ցաւէր նաև թողուլ գէսմունքը: ուստի հաւաքեց իր բոլոր ատակը և իրեն



Սթէֆէնսոնի շինած առաջին շոգեկառքը

անզ ուրիշ մը վաթճեց զինուորթուեան, իսկ ինքը նորէն սկսաւ աշխատիլ տոանց հանգստի: Ամբողջ օրը ածխահանքին մէջ աշխատելէ վերջ յոգնած ու վաստակած տուն կը վերադառնար երեկոները ուրիշներու ժամացոյցները չտկելու կամ ուրիշ բանի մը աշխատելու: Զորճ Սթէֆէնսոն միշտ կը մտածէր, թէ ինչպէս ընէ, որ իր վաստակը աւելցնէ՝ որպէս զի, թէ՛ ծեր ծնողքը կերակրէ և թէ՛ տղուն ուսում տայ:

Շար.

Թարգմ. Ռուսեր, ԱԳՈՒԱՐԳ ՀԱԶԱՐԱՊԵՏՅԱՆ



ԱՆՆՈԳՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԾԸ

(ՆՄԱՆՈՂԱՐԱՐ)

Ա.

Դաշտին մէջ, պճլտուն արեւին ճաճանչներուն տակ, ցորենները կը շողշողային ոսկիի պէս. դաշտին ոսկին ու հողագործին ոսկին. դաշտին ոսկին՝ ինչո՞ւ. որ անոր շքեղութիւնն էր գրեթէ, շա՛տ քիչ ժամանակի համար սակայն, իր հասուն հասկերուն ցուցադրութիւնով, երկրագործին ոսկին՝ ինչու որ ամբողջ ինչքը կը կազմէին անոր, Գարեգինին, որ, սերմանացանի եղանակը աշխատած, քրտինք թափած, պէտք եղած խնամքները տանելու ո՛ր եւ է յոգնութիւն չխնայած, ու հիմա առատապէս վարձատրուած էր բնութենէն:

Երկրագործը գոհ ու վէս նայուածք մը կը նետէր, բնութեան այս լիառատ վարձքին վրայ:

Եղանակը շա՛տ գեղեցիկ էր:

Զեփիւռը անոյշ շոյանքներով կուգար փայփայել Գարեգինի ու ծառային Թովմասի դէմքերը, մեղմացնելով անոնց խոնջէնքը, եւ կը գգուէր նաև լեցունկեկ հասկերը:

Քանի մը օրէն, արդէն քաղուած էին ամէնքն ալ. ցորենի դէզերու կոյտ մը շարուած արտին մէջ, կը սպասէին որպէսզի շտեմարանին խորը ամբարուին:

Ու ծերունի Թովմաս բեռնաւորուած տարիներու հոլովումին տուած փորձառութեամբ ու բեռովը, դառնալով Գարեգինի, կ'ըսէ, ձայնին ամէնէն մեղմ շեշտովը.

— Տէ՛ր իմ, տեսէ՛ք սա՛ սիրուն կոյտերը ցորեններուն, դեռ մնա՛ն դաշտին մէջ, այրող արեւուն. զանոնք ամբարելու ժամանակն է:

— Բայց, ծերո՛ւկ Թովմաս, չե՞ս գիտեր որ մեր բարեկամին, Լեւոնի հարսնիքին ներկայ պէտք է որ գտնուիմ այսօր: Այսօր կամ վաղը, պիտի լեցնենք վերջապէս շտեմարանը: Օր մը կամ երկու՝ հոս մնալովը չէ՛ որ պիտի մնասուի, հին բարեկամս: Օղը պայծառ է. անձրեւի վախ չկայ:

Ու, քաղքենի հագուստներով, Գարեգին կը մեկնի, հոն ձըգէլով Թովմաս աղբարը ու ցորեններու դէզերն ալ՝ դաշտին մէջ:

Դաշտն ալ, հիմակ, իր արգանդէն ծնածները միա՛ն կը կրէ իր վրայ. Թովմաս իր պարզուկ հիւզակը վերադարձած է:

Բ.

Փայլուն հանդէս մը, կեանքոտ խրախճանութիւններ, վերջապէս ինչ որ վայելուչ է հարսնիքի մը, տեղի կ'ունենային այդօրը լեւոնին տունը:

Գինին՝ սեղանին կեանքն էր:

Աւէնուն ձեռքը մէյմէկ փրփրադէզ բաժակ՝ իրարու կը բաղխէին:

Յետոյ, սեղանէն վերջ, պարը, երգը:

Ու երբ աւտուան մօտ, արշալոյսը կ'աւետէր արեւու գալուստը, որ հունա՛, հորիզոնին վրայ, ոսկիէ սլաքներ կ'արձակէր իր առջեւէն. հարսնետոնները տուներին վերադարձան:

Գ.

Առջի իրիկուան գինովութենէն, պարէն, անքունութենէն տկարացած, Գարեգին կը ստիպուի մէկ քանի օր տունը մնալ:

Թովմաս նորէն կ'առաջարկէ անոր ամբարեւ ջորենները: Չոր պատասխան մը կը ստանայ:

— Անհամբեր ծերուկս, ինչո՞ւ կ'աճապարես: Օդը մեզի մնաս չի կրնար հասցնել:

Գիշերը, օդը իր դէմքը կը ծամածռէ սակայն: Սոսկալի անձրեւ մը կը տեղայ շարունակ, գետը կը պոռթկայ, ու անխուհեմ մարդուկին հունձքը կը քշէ կը տանի:

Աղէտքը չա՛տ ծանր հարուած մըն էր, բայց գեղեցիկ դաս մը միանգամայն:

Ալեւոր Թովմաս, տխուր երեւոյթով, կ'ըսէ տիրոջը:

— Պէտք չէ որ մոռնաք, տէ՛ր իմ, առածը որ կ'ըսէ. «Այսօրուան գործը՝ վաղուան մի՛ ձգեք»:

Վ. Յ. ԳԱՐԱԳԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒ ԶՐԱԳ

Օր մը տղուն մէկը կը հարցունէր հօրը՝ որ շատ հարստացեր էր. — Հա՛յր, այսպէս հարստանալու համար ի՞նչ ըրած ես, ես վաստակածովս հազիւ ամէն խնայութեամբ երկու ծայրը մէկ մէկու կը բերեմ: — Անոր կերպն ամենադիւրինն է, որդեա՛կ, կը պատասխանէ հայրը՝ դիմացի սեղանին վրայ վառած երկու ճրագին մէկը մարելով, եւ այս է որ մարդ գիտնայ պէտք եղածով բաւականանալ, եւ մէկ ճրագ միայն վառել՝ երրորդ երկու հատ վառելու պէտք չունի:

ՊԱՏԼԻԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԵՐ

ՓՈՔՐԻԿ ԲԹՈՒԿԸ

(ԱՒԱՆԴԱՎԷՊ)

(Շարունակութիւն 46րդ թիւէն եւ վերջ)

Բթուկին վիշտը այնչափ մեծ եղաւ որ չկրցաւ դուրս ելլել ու արեւէն տաքնալ, Յորենը դաշտամուկին տանը վրայ կը բուսնէր, պզտիկ աղջկան, որ բթամատէ քիչ մը աւելի մեծ էր, — ճմա-
րիտ անտառի մը խարկանքը տալով:

— Այս ամառ քու նոր հարսի ճեմեղներուդ պիտի աշխատիս, ըսաւ անոր մուկը, վասն զի ձանձրանալի սեւամուշտակ խլուրդը քու ձեռքդ խնդրեց, Դուն, խլուրդին հետ կարգուելու համար, պէտք է պատշաճօրէն հագուիս:

Պզտիկը ստիպուեցաւ ձեռք առնել աղեկատը, ու մուկն ալ սկսաւ անոր հետ թելեր հիւսել, Ամէն իրիկուն, խլուրդը անոնց կ'այցելէր ու ամառ օրերուն ձանձրոյթին վրայ կը խօսէր, որովհետեւ օգերը շատ տաք ու օրերը շատ երկայն էին: Ուստի հարս-
նիքը եղանակին վերջը պիտի ըլլար: Այդ օրուան սպասելով, Բթուկը ամէն օր կ'երթար դուռնէն դիտելու տրեւածագը եւ մայ-
րամուտը, կ'զմայլէր բնութեան գեղեցկութեանը վրայ եւ սիրելի ծիծեռնակին վրայ կը խորհէր, որ թերեւ երբեք չպիտի վերա-
դառնար:

Աչունը հասաւ ու Բթուկը իր հագուստները լմնցուցած էր:

— Չորս շաբաթէն հարսնիքը պիտի ըլլայ: Ըսաւ մուկը: Ու հէք պզտիկը լացաւ, ինչու որ չէր ուզեր ամուսնանալ ձանձրալի խլուրդին հետ:

— Ի՞նչ անասնութիւն, աղաղակեց մուկը, այդչափ յամառ մի՛ ըլլար, ապա թէ ոչ քեզի կը խածնեմ ճերմակ ակռայովս: Պէտք է երջանիկ ըլլաս, որովհետեւ այդքան գեղեցիկ մարդու մը հետ կ'ամուսնանաս կոր:

Հարսնիքին օրը հասաւ:

Պլուրդը ներկայացաւ՝ պզտիկ Բթուկը հողին տակը տանելու համար, ուր պիտի գրկուէր առյաւէտ արեւուն լոյսէն: Դաշտա-
մուկին տունը, գոնէ թոյլատրուած էր երթալ նայելու:

— Մնա՛ք բարով, աղւոր արեւ, ըսաւ վշտահար երեւոյթով,

բազուկները բարձրացնելով։ Մնաք բարով, ուրեմն, քանի որ դատապարտուած եմ այլ եւս այն տխուր վայրերուն մէջ ապրիլ, ուր կարելի չէ քու կենսատու ճառագայթներդ վայելի։

Յետոյ քանի մը քայլ հեռացաւ տունէն, որովհետեւ ցորենը հնձած էին, հիմա միայն ամիսները մնացած էին։

— Մնա՛ս բարով, մնա՛ս բարով, ըսաւ, պզտիկ ոսկեգոյն ծաղիկ մը համբուրելով, եթէ երբեք ծիծեռնակը տեսնես, զինքը ողջունէ իմ մեկնումիս համար։

— Ճի՛ւ, ճի՛ւ, լսեց այն վայկեանին։

Գլուխը վեր վերցուց. ծիծեռնակն էր որ կ'անցնէր։ Թռչունը ամենամեծ ուրախութիւն մը զգաց տեսնելով փօքրիկ Բթուկը. արագօրէն վար իջաւ երգելով ու խկաւ իր պզտիկ բարերարուն հիին մօտ։ Այս վերջինը անոր պատմեց թէ ի՛նչպէս կ'ուզէին զինքը ամուսնացնել գետնաբնակ խլուրդին հետ. թէ ի՛նչպէս միին էր հողին տակ, ուր արեւը երբեք չէր թափանցեր։ Ըսած ատենն ալ, սկսաւ լալ։

— Զմեռը կը հասնի. ըսաւ ծիծեռնակը, ես տաք երկիրներ կը վերադառնամ, կ'ուզե՞ս ինծի հետեւիլ, իմ կռակս կ'ելլաս, ու ինքզինքդ գօտիով ինծի կը կապես։ Մենք հեռու կը փախչինք անպիտան խլուրդէն ու իր մութ բնակարանէն, հեռու լեռներէն ալ անդին, ուր արեւն հոսկէ աւելի փայլուն է, ուր ամառն ու ծաղիկները յաւիտենական են։ Ինծի հետ եկո՛ւ, սիրելի պզտիկ, դուն՝ որ կեանքս ազատեցիր միին նրբանցքին մէջէն՝ ուր սառելու վրայ էի, ցուրտէն կիսամեռ։

— Այո՛, քեզի հետ պիտի գամ, ըսաւ, Բթուկը։ Ու նստեցաւ թռչունին կռակին վրայ եւ ինքզինքն ալ ամէնէն հաստատուն փետուրներուն կապեց։ Յետոյ ծիծեռնակին հետ անցաւ գնաց անտառին, ծովուն ու բարձր ձիւնապատ լեռներուն վըրայէն։

Բթուկը մտեցաւ, բայց ինքզինքը տաք փետուրներուն տակ պահեց, միայն գլուխը դուրս ձգելով, որպէս զի գեղեցկութիւններուն վրայ հիանայ։ Այսպէս տաք երկիրներ հասան ուր որթը իր կարմիր ու կապոյտ պտուղներով կը բուսնի. ամէն փոսերուն մէջ, ուր կը տեսնուին կիտրոնենիներու եւ նարնջենիներու ամբողջ անտառներ, ուր հազարաւոր սքանչելի բոյսեր իրենց բուրմունքը կ'արտաբուրէին։ Փողոցներուն մէջ, տղաքը խոշոր երփնագեղ թիթեռներով կը խաղային։

Ինչ մը աւելի հեռուն, ծիծեռնակը կեցաւ կապոյտ լճի մը փունքին մօտ. սրուն առջեւ կը բարձրանար հինօրեայ մարմարէ դղեակ մը, չրջապատուած սիւներով՝ սրունք որթատունկեր կը կրէին։ Գազաթը՝ բազմաթիւ թռչունի բոյներ կը տեսնուէին։

Այս բոյներէն մէկը բնակարանն էր այն ծիծեռնակին որ Բըթուկը կը տանէր :

— Ահաւասիկ իմ բնակարանս, ըսաւ Թռչունը, բայց պատշաճ չպիտի ըլլայ որ դուն ինծի հետ հոս ապրիս. ասկէ զատ քեզ ընդունելու համար ալ առաջուց պատրաստութիւններ չեմ տեսած : Դուն քեզի համար ընտրէ՛ ամենէն աղւոր ծաղիկներէն մէկը. ես քեզի հոն կը տեղաւորեմ, ու կ'ընեմ ինչ որ կարելի է այդ բնակարանը քեզի հաճելի ընելու համար :

— Ի՞նչ երջանկութիւն, գոչեց Բթուկը՝ իրարու զարնելով իր մանրիկ ձեռքերը :

Խոշոր, փայլուն ու ճերմակ ծաղիկներ կը բուսնէին շրջած



սիւնի մը կտորներուն մէջ. հոն է որ ծիծեռնակը լայն տերեւներով ծաղիկի մը մէջ զետեղեց զայն :

Բթուկը կատարելապէս ուրախ՝ սխրացած մնացած էր բոլոր այն հրաշալիքներէն որոնք կը շրջապատէին այդ դիւթական վայրերը : Բայց որքան մեծ եղաւ իր զարմացումը. պզտիկ ու ապակիի պէս թափանցիկ ծաղիկի մէջ նստած էր, եւ հազիւ բթամատի մը չափ երկայն էր : Գլխուն վրայ ոսկեպսակ մը՝ եւ ուսերուն վրայ փայլուն թեւեր կը կրէր :

Ատիկա ծաղիկին ոգին էր. ամէն ծաղիկ պտիկ մարդուկի մը

եւ մինինիկ աղջկան մը իբր դարպաս կը ծառայէր, ու այդ ոգին ամենուն վրայ կ'իշխէր:

— Աստուած իմ, ինչ գեղեցիկ է, ըսաւ Բթուկը Թռչունին:

Պզտիկ ծաղկատէրը, որ այնքան փափուկ ու նուրբ էր, տեսնելով հսկայական Թռչունը՝ սարսափեցաւ, բայց Բթուկին տեսքը զինքը հանգարտեցուց, որովհետեւ անիկա իրեն աշխարհի էն գեղանի աղջիկը կ'երեւար: Իր ոսկի պսակն անոր գլուխը զբաւ, անոր անունը հարցուց ու զայն կնութեան ինդրեց, — ինչ որ Բթուկը չմերժեց:

— Ասկէ վերջը քու անունդ Բթուկ չպիտի ըլլայ, ըսաւ ծաղիկներու ոգին. դուն ծաղիկներու դժխոն պիտի կոչուիս:

Այն ատեն, Թռչունը իր վերջին հրաժեշտը տուաւ ու առյաւելտ հեռացաւ:

Թարգմ. ՎԱՀԷ

ԱՆՏԵՐՈՐՆ

ԱՌԵՐԵՒՈՅԹ ՄԵՋ

Մատրասի մէջ հրատարակող (1880ի ատենները) Ասուածասես անուն Թերթին մէջ հետագայ յօդուածն հրատարակուած էր, զոր գիտական հանդէս մը Թարգմանած է:

«Ասկէ 30 տարիի չափ առաջ, Կալկաթայի մէջ, Ճօն անուն անգլիացի մը, Հօրայի դարձնոցարաններուն պետ, քանի մը գործաւորներու հետ միասին անտառ գնաց փայտ կտրելու: Անտառին մէջ բաւական յառաջանալով, հեռուէն երեք հոգի նշմարեց որոնք աղօթողի դիրքի մը մէջ կը գտնուէին: Հանած աղմուկէն՝ ջերմեռանդներէն երկուքը փախան անհետացան, իսկ երրորդը շարժում մը իսկ չըրաւ. սրունքները բռնուած էին պանանիի ծառին արմատներուն մէջ: Անգլիացին ա'լ աւելի մօտենալով դիտեց որ Նօկիքն Թմրութեան վիճակի մէջ կը գտնուի: Աչքերը գոց էին, ալ ձեռքին կապուած էր պրահմական մորթէ շինուած շղթան. եւ ձախ ձեռքին մեծ մատն երկարած էր: Ծառին արմատները կտրեցին եւ Նօկիքն քաղաք տարին արձանացած վիճակի մը մէջ: Տասներեք օր պահեց այդ դիրքը. հազարաւոր մարդեր, կիներ ու տղաքներ եկան տեսնել զայն, սակայն եւ ոչ մի շարժում զգալի եղաւ անոր մարմինին վրայ: Յետոյ տեղին Բաճան իր բնակարանը փոխադրել տուաւ զայն եւ հնար եղած բոլոր խնամքները տրուեցաւ անոր՝ վերականգնացնելու համար զայն:

բայց ի զուր: Մարմինին չուան մը կապելով Գանգէս գետը նետեցին, ուր ջուրին տակը մնաց չորս օր ու չորս գիշեր: Ի վերջոյ նշանաւոր բժիշկ մը ՕՇօկնէս յաջողեցաւ տնոր աչքերը բանալ տալ: Զորս կողմը նայելով եօկին, սկսաւ արտասուել ու գոչեց. « Ես եւ ո՛չ մէկուն չարիք ըրած եմ, ինչո՞ւ կը չարչարէք զիս »: Քիչ ետքը բերանը բացաւ, անօթի ըլլալը յայտնելու ձեւով մը, անմիջապէս միտ ու խմելիք շատ քանակութեամբ բերանէն վար հրեցին: Կենդանիներու աշխարհքը վերադառնալէն երկու ամիս ետքը մեռաւ ան... պարապ ստամոքսին մէջ այնքան առատ սնունդ լեցուելէն »:

Ահա՛ ուրիշ պատմութիւն մըն ալ, Փաքիրի մը պատմութիւնը որ քսան օր թաղուած մնաց: Պատմիչը, ականատես վկան եղած է.

« Օր մը հրաւէր ստացայ, Թանկօրայի մէջ, ներկայ գտնուելու խիստ տարօրինակ հանգէսի մը. քսան օրէ ի վեր ողջ ողջ թաղուած Փաքիրի մը գերեզմանէն հանելու արարողութիւնն էր այդ: Վիշնուի աղանդէն Սեմիւնի մը կը պնդէ եղեր թէ կարող է անսահման տեւողութեամբ ապրիլ առանց ուտելու եւ խմելու եւ նոյն իսկ գերեզմանի մէջ փակուած մնալով: Քանի մը անգամներ յաջողած ըլլալով այդ պահեցողութիւններուն մէջ, Լնդիկներուն աչքին սուրբի մը տեղ անցած էր՝ պաշտպանուած արարիչն Աստուծոյ շնորհներով: Անգլիական կառավարութիւնը, այս աւելորդապաշտութիւններու վարկը կոտորելու համար առաջարկեց այդ Փաքիրին որ ինքը թաղէ զայն: Ի մեծ զարմացում ամենուն Փաքիրը ընդունեց: Անգլիացի սպաներու եւ բազմաթիւ Եւրոպացիներու ներկայութեամբ, Փաքիրը փոսին մէջ իջաւ, վրան հողով ծածկեցին եւ պահապաններ դրին որ քսան օրէ առաջ մարդօգնութեան չփութար թաղուած հնդիկին: Այդ պայմանաժամին աւարտելէն ետքը կառավարական ներկայացուցիչներու ներկայութեանը պիտի բացուէր գերեզմանը: Որոշեալ օրը, խուռն բազմութիւն մը հաւաքուած էր հոն. թիաթաղեր գերեզմանին վրայի հողը վեցուցին, յետոյ կնքուած գերեզմանաքարին հասնելով օղակներէն պամպուններ անցնելով՝ վեր քաշեցին բաց թողլով գերեզմանն, ուրիշ ծանր ու խոնաւ հոտ մը կ'արտարուէր. չորս կողմը պատ քաշուած այդ փոսին մէջ գետեղուած էր դադաղն, որուն կափարիչն պտուտակներով ամուր մը գոցուած էր: Զուաններ իջեցուցին եւ վեր քաշեցին զայն: Տեսարանին ամէնէն չահեկան ու հետաքրքրաշարժ մասը պիտի սկսէր: Կափարիչը հանուեցաւ եւ տեսանք, նիհար ու երկայն մարմին մը, փսիաթներու վրայ պառկած, որու դիակի երեւոյթ առած դէմքը կենդանութեան բնաւ նշան չէր տար: Պրահմին մը մօտեցաւ եւ

դադաղէն դուրս հանեց մսագերծ, մօմիա դարձած գլուխ մը, որ չես գիտեր ի՛նչ օրէնքի հպատակած, անեղծ մնացած էր: Ուրիշ երկու մարդիկ ալ մարմինը բռնելով դադաղէն դուրս փսիաթի մը վրայ նստած դիրքի մէջ գրին: Ասանկ նիհարութիւն բնաւ տեսած չեմ: Ֆաքիրին չորցած ու կարծրացած մորթը ոսկորներուն փակած էր. ամենափոքր շարժում մը ընելուն, անդամները ժանգոտած ծխնիներու պէս աղմուկ կը հանէին: Պրահմինը բացաւ անոր բերանը եւ կէս գաւաթ ջուր լեցուց կոկորդէն վար, և կըռնակի վրայ պառկեցուց: Յետոյ սկսաւ ամբողջ մարմինը շփել նախ կամաց կամաց եւ երթալով արագցնելով, ժամու մը չափ տեւեց այս գործողութիւնը, երբ Անգլիացիները կ'սկսէին ծաղրանքներ ընել, Ֆաքիրը բացաւ աչքերն ու հառաչ մը քարձակեց:

« Բնիկներու բերնէն ահագին հուրրա՛ մը թռաւ. պրահմինը շարունակեց իր շփումները. կամաց կամաց թաղուող սկսաւ թեւը երերցնել, յետոյ մէկ սրունքը եւ ի վերջոյ, առանց ուրիշին օգնութեան ինքնիրենը նստաւ փսիաթին վրայ, չորս կողմը ակնարկ մը նետելով. նորէն ջուր տուին խմելու. եւ տասը վայրկեան ետքը Հնդիկ Ղազարոսը՝ Պրահմինին թեւին կրթնած՝ մեկնեցաւ: Հնդիկներու բազմութիւնը իր անցքին վրայ կը ծնրադրէր »:

Թարգ. Զ. Ն. ՊէրՊէրեԱն


ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

Եթէ անձ մը մէկ ձեռքը գոյգ քիւով դրամներ ու միւս ձեռքը անգոյգ քուով դրամներ ունենայ, զսնել քէ գոյգ քիւր որ ձեռքն է:

Այլ ձեռքի դրամներու թիւը գոյգ թիւով մը բազմապատկել տուր, և ձախ ձեռքի դրամներու թիւն ալ՝ անգոյգ թիւով մը. երկու գումարներն իրարու հետ գումարելով՝ թող քեզի ըսէ. եթէ ամբողջը անգոյգ է, գոյգ թիւը ալ ձեռքին մէջ կը գտնուի. եթէ ամբողջը գոյգ է, գոյգ թիւը ձախ ձեռքին մէջ է:

Օրինակ. — Ենթադրենք թէ ալ ձեռքիս մէջ 8 և ձախ ձեռքիս մէջ 7 դրամ բռնած եմ. 8ը երկուքով բազմապատկելով՝ կ'ունենամ 16, 7ն ալ 3 ու բազմապատկելով՝ կ'ունենամ 21, ապա 16 ու 21 գումարելով՝ կ'ունենամ 37 որ անգոյգ թիւ մ'է:

Ընդհակառակն. եթէ ալ ձեռքս 7 ու ձախ ձեռքս 8 դրամ բռնած ըլլամ, 2 անգամ 7ը կ'ընէ 14, իսկ 3 անգամ ութը կ'ընէ 24, 14 ու 24 գումարելով՝ կ'ունենամ 38 որ գոյգ թիւ մ'է:



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՅԱԻ**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ**

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՄԷՆԷՆ Ժողովրդական, ԱՄԷՆԷՆ Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑՐ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Բօնեքը. — Ագահութիւն. — Պարահանդէսը ինքնաւոր առաջ (Բանագող Լուսինեան). — Հագարումէկ կերպեր ժամը գիտնալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչո՞ւ ես չեմ յաջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխոհեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. փանոսեան). — Տիկին Մաք Ռիլերմա եւ կայծակը. — Բռան եւ ... դարու հաշ մը. — Կրօններու պատմութիւնը. — Այծեամի որդը. — Հարսի մը պատրանքը (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու անդ. — Նշանաւոր միակեանքներ. — Մխիթարական բուդը յոռետես բարեկամիս (Քասիմ). — Սրկբագործական Պատառիկներ. — Օգտակար գիտելիքներ. — Յաւին դարմանը. — Աշխարհիս նախնական վիճակները. — Աչքերու առողջութիւնը. — Ակամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը գտնող պարոնը. — Տոմսակնիդ, պարոնայ. — Հինգ առ հարիւր տակու. — Նամակադրոշմի լեզուն. — Զուարճալի դատաստան. — Թօթօ. — Բորնիշոնի երազը. — Մեղրալունքի նամբորդութիւն. — Մայր ու տղայ. — ԱԿՆՑԻ ՍԱՐԱՑ ՄԸ. — Գիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռասենին. — Բռան բարայով աշխարհիս ոսկին. — ԹԻՐԸՍԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒԱՐՃԱԼԻՔՆԵՐ եւայլն, եւայլն.

Գինն է 5 Դանեկան. — Դաւառները՝ թղթատարով 6 Դանեկան

Հանրագիտակի բոլոր Գործակալներու հով

Ուղղակի մենէ հինգ հաս գնողներուն վեցերորդ մը նուէր կը տուի



ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Հանրագիտակի Մեծ. Բաժանորդներէ և Գործակալներէ կը խնդրենք որ Բաժանորդագիրներէ և յանձնարարութիւններէ մընացած պարտքերնին վճարել բարեհաճին այլևս, որովհետեւ տարւոյն 11 ամիսը լրանալէն վերջը՝ դեռ չատ տեղեր սոյնօրինակ հաշիւներ անվճար կը մնան:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան և ո՛ր և է գործառնութեան առթիւ հարկ եղած զիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Շ. Գարահիսար, Գ. էֆ. Պ. — Ղրկուեցաւ: — 50 հատը 10 շրուշ. լաւ տեսակը: Թղթատարի ծախքը զատ:

Նիկովիդիա. Յ. էֆ. Տ. Ա. — Ստացանք. — Յանձնարարութիւննիդ զրկուեցաւ:

Ամասիա. Հ. էֆ. Խ. — Ձեր յանձնարարութիւնը զրկուեցաւ Սամսոն:

Խարբերդ. Մ. էֆ. Ո. — Ստացանք նամակնիդ, պատասխանը կ'ընդունիք: — Պր. Յ. Շ. ին ըսէիք որ 1—45 թիւերը մեզ վերադարձնէ:

Թօքաթ. Խ. էֆ. Թ. — Ձեր հասցէին զրկուեցաւ:

Սամսոն. Յ. էֆ. Ն. — Յանձնարարութիւննիդ զրկուեցաւ:

Էօտէմիշ. Ս. էֆ. Ա. — Տարեցոյցները զրկուեցան, իսկ միւսը դեռ չկրցինք ձեռք ձգել:

Տարսոն Գոլէճ. Գ. էֆ. Հ. Գ. — Ստացանք չնորհակալ ենք:

ԽՄՐԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

1771

1771

1771

1771

1771

1771

1771

1771

1771

1771

1771

1771

1771

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՅՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ.

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամէնէն Ժողովրդական, Ամէնէն Զուարճալի
Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑԸ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Բօնետը. — Ագահութիւն. — Պարահանդէտը ի՞նչ առաքի առաջ (Բանագող Լուսինեան). — Հագարումէկ կերպեր ժամը գիտնալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչո՞ւ ես չեմ յաջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխօսեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Ուկլերմա եւ կայծակը. — Բռան եւ ... դարու ճաշ մը. — Կրօններու պատմութիւնը. — Այծեամի որսը. — Հարսի մը պատրանքը (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու անդ. — Նշանաւոր միականիներ. — Մխիթարական բուդոյ յոռետես բարեկամիս (Քասիմ). — Շրկրագործական Պատառիկներ. — Օգտակար գիտելիքներ. — Յաւին դարմանը. — Աշխարհիս նախնական վիճակները. — Աչքերու առողջութիւնը. — Ակամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը զանոց պարտեր. — Տոմսակնիդ, պարոնա՛յք. — Հինգ առ հարիւր տոկոս. — Նամակադրոշմի լեզուն. — Զուարճալի դատաստան. — Թօթօ. — Գարնիշոնի երազը. — Մեղրալուսնի նամբորդութիւն. — Մայր ու տղայ. — ԱՆՆՑԻ ՍԱՐՈՅՑ ՄԸ. — Գիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռատենին. — Բռան բարայոյժ աշխարհիս ոսկին. — ԹՐԸՍԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒԱՐՃԱԼԻՔՆԵՐ եւայլն, եւայլն.

Գինն է 5 Դանեկան. — Գաւառներ՝ քղբասարով 6 Դանեկան

Հանրագիտակի բոլոր Գործակալներու հով

Ուղղակի մեքէ հինգ հաս գնողներուն վեցերորդ մը նուէր կը տուի

